

## ԳԻՏԱԿԱՆՔ

**ՄԵԾԱՄԵԾ ՄԱՐԿԻԱՆՑ ՀԱՆՃԱՐՈՅՆ ԿԱՆՆԻԱՀԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ.** — Մեծամեծ մարդկանէ շատոնք նշանաւոր եղան իրենց հանճարոյն նախնայ պողաբերութեամբ: Դանտէ իտալացոց բերրոզաւայրն իւր առաջին նուագն առ Երանուհի (Beatrice), իննամեայ հասակին մէջ յօրինեց: Թաստու և Լուպէզ դէ Վեզա՝ իրենց նախկին ոտանաւոր գրութիւնքը՝ մին 10 և միւսն 18 տարեկան գրեցին: Կալդերոն 13ամեայ մատենագրել սկսաւ: Վիկտոր Հուգոն 14 տարուան պակաւոր կը ճեմէր Գաղղոյի հասարակապետութեան (1793) Փշոյրեալ ըստած ամսոյն (ապրիլ 21—21 մայիս) խաղերու մէջ: Բիւրոն 12 ամեայ ոտանաւորներ կը գրէր: Մէլիերբէր 6 տարեկան՝ դաշնակա հարութեան հասարակաց նիստեր կուտար: Կղաւզիոս Վերնէտ հնգամեայ հասակին մէջ շատ լաւ կը գծագրէր: Միրաբո 11 տարեկան հատոր մի գրեց: Հէնտէ և Քերուբինի 13 տարեկան հասակի մէջ մի մի ամբողջ ձայնաւոր պատարագի երաժշտութիւն կազմեցին, ըստ սոփորութեան արեւմտեան եկեղեցոյ: Հուպայել Սանտոն 8 ամեայ կը նկարէր: Ուեպէր իւր առաջին թատրերգութիւնը ներկայացրնել տուաւ 14 տարեկան: Պասկալ 12 ամեայ հասակին մէջ լուծած էր Եւկլիդեսի 32 երկրաչափական առածքը: Հանճարոյ կանխահասութեան այս զարմանալի նշանք ու արդիւնք, արգել չեղան այս հուշակաւոր մարդկանց՝ ընդդէմ կարծեաց բազմաց՝ ընծայել նաեւ անազան իրենց վաստակոց փառաւոր պատկեր, իւրաքանչիւրն իւր գործոց զուխ՝ ընտիր երկասիրութիւններ:

\* \* \*

**ՆՈՐԱԳԻԻՏ ՊԱՊԻՐ ՄԻ.** — 1892, սեպտեմբերին, Լոնդրա գումարուած արեւելագիտաց ժողովին մէջ, Վիեննայի համալսարանի ուսուցիչ պր. Հեքլէր, եգիպտեան բաժանման անգամոց ներկայացուց՝ քանի մ'ամիս առաջ Եգիպտոսի մէջ գտնուած պապիր մի, որ Վիեննայ գտնուած ամբողջ ձեռագրին կտոր մ'էր: Սա կը բովանդակէ յինքեան Չաքարիայ ամբողջ մարգարէութեան և սակաւ ինչ մասն Մազաքիայ մարգարէութեան յունական թարգմանութիւնը, իւր 16 խորագիր էջերու մէջ, յորս բառերը իրարմէ բաժնուած չեն, զոր պր. Հեքլէր ձեռագրին խիստ հնութեան նշան կը համարի. որ մինչեւ երրորդ դարու կը կարծուի:

\* \* \*

**ՆՈՐԱԳԻԻՏ ԿԻՍԱՆԴՐԻ ՄԻ.** — Մօտերս Քիոս կղզոյն մէջ պատնուեցաւ Աթենասայ կիսանդրի մի, զարմանալի կերպով ցարգ անարատ մնա-

ցած, որ չորրորդ դարու կը համարուի նախ քան զնոր թուական: Քթին ժայրն թեթեւ մ'այլայլած է, և զլեռոյն վերի մասն սակաւ մի խանգարուած՝ փորելու ժամանակ ընդունած բրբջի հարուածէն: Այս գեղեցիկ կիսանդրիս Աւտորիոյ կայսրուհին ստացաւ, և պիտի զետեղուի Կարլոտտենբուրգի արքունի պարտիզաց միոյն մէջ:

Սոյն հնագիտական զիւտիս առթիւ յիշենք հօս, որ Նանկլյի համալսարանի զպրովթեանց ուսուցիչ պր. Կարլոս Դիլքի, ուսումնական ուղեւորութիւն մի յանձնուած է, զէպ ի հիւսիսային Ափրիկէ, ուր բիւզանդեան ժամանակի յիշատակարանաց նկատմամբ հնագիտական խուզարկութիւններ պիտի ընէ:

## Յ Ա Ն Կ

|   |     |
|---|-----|
| Պատմութիւն Ս. Սեղբեսարոսի, համեմատութեամբ հայերէն և յունարէն թարգմանութեանց . . . . .             | 401 |
| Հայկական բուսաբանութիւն . . . . .   | 417 |
| Հայ լեզուի ուսումն յԵւրոպա . . . . .  | 423 |
| Դրանսիլուանիոյ Եղիսաբեթուպոլիս քաղքին ազգային այլ և այլ օրէնքներն ու կանոնադրութիւններն . . . . . | 429 |
| Գեղարուեստք. — Ճաշակ ներկայ անգղիական նկարչութեան . . . . .                                       | 434 |
| Հանգուցեալ պարոն Մկրտիչ Էմինի կտակն . . . . .   | 441 |
| Քոլումպեան ցուցահանդէսն ի Շիզակօ . . . . .  | 443 |
| Կաղնի և կաղնեակ (առակ). . . . .   | 446 |
| <b>ԳԻՏԱԿԱՆՔ</b>   |     |
| Մեծամեծ մարդկանց հանճարոյն կանխահասութիւնն . . . . .  | 447 |
| Նորագիւտ պապեր մի . . . . .   | 447 |
| » կիսանդրի մի . . . . .   | 447 |

